

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱՐԵՐՎԱԾ ԿԱՎԵ ՄԵԱՄՈՐՃՆԵՐԻ
ՔՎԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ի. Գ. ՂԱՐԻՅԱՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում միջնադարյան հնավայրերից վերջին տարիներին գտնվել են մոտ 150 կավե ծխամորճեր, ու շարունակվում է ավելանալ դրանց թիվը: Ամենասովոր խմբաքանակը (շուրջ 60 հատ) գտնվել է Գուգարքի Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռի ամրոցում՝ մեր կատարած պեղումների ժամանակ, որոնք այժմ գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Մի այլ սովոր խմբաքանակ (41 հատ) պահվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում. սրանց մի մասը հրատարակել է հնագետ, պրոֆեսոր Ստ. Ծսայանը¹:

Գյումրիի գավառագիտական թանգարանում մինչ 1988 թվի ավերիչ երկրաշարժը պահվում էր 16 հատ, Հայաստանի պատմության պետական թանգարանում (բացի Լոռի քաղաք-ամրոցից հայտնաբերվածները)՝ ինը հատ, Գավառ քաղաքի (նախկին Կամո) թանգարանում՝ 7 հատ, Ղափանում՝ 3, Եղեգնաձորում՝ 5 և այլն:

Այս ծխամորճերը թանգարաններ են բերվել տարբեր ճանապարհներով և մեծ մասամբ անհայտ ծագում ունեն: Բացառություն են Լոռիի և Գավառ քաղաքի ծխամորճերը: Վերջիններս գտնվել են հնագետ Գեղեցիկ Միքայելյանի՝ Գավառում կատարած հետախուզական պեղումներից²: Գ. Միքայելյանի հավաստմամբ խնդրո առարկա կավե ծխամորճերը գտնվել են ինչպես քաղաքի ժամանակակից թատրոնի շենքի հիմքերը փորելիս, նույնպես և՛ «Բերդի գլուխ» կոչվող ուրարտական ամրոցի վերին շերտից, որը միջնադարյան բնակավայր է եղել հնում, իսկ այժմ վերածվել է քաղաքային հսկայական գերեզմանատան³:

Թատրոնի շենքի հիմքի փոստրակը փորելիս շուրջ 1,5—2 մետր խորությունում հանդիպել են միջնադարյան ժամանակաշրջանով (ժԹ—ժԳ դդ.) թվագրվող կավանոթների ուղեկցությամբ մի քանի կավե ծխամորճեր: Սակայն հնագետ Գ. Միքայելյանը պնդում է, որ դրանք հնարավոր է թվագրել նույնիսկ վաղ միջնադարյան ժամանակով⁴:

Գառնի ամրոցի միջնադարյան շերտի տարբեր տարիների պեղումներից գտնվել է 6 ծխամորճ, Դվինում՝ պատահաբար (ինչպես նշում են հուշարձանը պեղող հնագետները) շորս հատ⁵, էջմիածնում և Արմավիրում՝ մեկական, Բջնի ամրոցի ժԳ—ժԴ դարերի շերտից՝ երեք⁷, Արտա-

¹ Տե՛ս Երևան քաղաքի պատմության թանգարանի իրերի կատալոգ, կազմեց Ս. Ծսայանը, Երևան, 1964, էջ 34—35, հերթական համարները 114—124, աղ. ժԳ, նկ. 1—11:

² Տե՛ս Գ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, «Հայաստանի հնագիտական հուշարձաններ», հ. 1, աղ. 13, նկ. 1, 4:

³ Այս մասին բազմավաստակ վիճաբանություն է. Բարխուդարյանը գրում է. «... ուր շուրջ կանգնած են հիանալի քանդակներով խաչքարեր և մեծամեծ տապանաքարեր, որոնք պատկանում են տեղի տանուտերերին և նրանց տոհմակիցներին: Այստեղ առանձնակի է սք. Աստվածածին մատուռի մոտի խաչքարը Գավառի առվի և եկեղեցու շինության կարևոր արձանագրությամբ (Մ 200) 1374 թվականով: Ս. Բարխուդարյանին հաջողվել է միայն այդտեղից հավաքել 56 արձանագրություն, որոնք հիմնականում թվագրվում են 1374-ից մինչև 1596 թվականը, և հավանական է, որ Գավառի տարածքը բնակչությունից զրկվել է Շահ Աբասի 1604—5 թթ. «Մեծ սուրբալիք» հետևանքով, որովհետև ժԷ—ժԸ դարերից ոչ մի վիճաբան հիշատակություն չկա: Տե՛ս «Դվինի հայ վիճագրություն», հ. 4, Երևան, 1973, էջ 49, արձ. 200—256:

⁴ Տե՛ս Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 18—20 և 55:

⁵ Տե՛ս Բ. Առախյան, Գ. Կարախանյան, Գառնի-3, Երևան, 1963, էջ 87—103, նկ. 35:

⁶ Տե՛ս Գ. Կարախանյան, Անիի և Դվինի պեղումներով հայտնաբերված անջնարակ, դարձարոն խեցեղենը, թե՛կ. դիսերտացիա, Երևան, 1953, ԳԱ գրադարան, էջ 193—194:

⁷ Բջնի ամրոցում պեղումները կատարվել են մեր կողմից 1977—1980 թթ., նյութերը գտնվում են ԵՊՀ պատմության թանգարանում:

շատում՝ երկու, Աղցում՝ մեկի, Հառիճի միջնադարյան վանական համալիրի պեղումների ժամանակ 1969 թվին գտնվել է մեկ ծխամորճ՝ հայատառ արձանագրությամբ, ԺԳ դարի սելջուկյան դրամի ուղեկցությամբ, որի մասին մեզ ժամանակին տեղյակ է պահել վաղամեծիկ հնագետ, պրոֆ. Քելման Խաչատրյանը:

Վերջերս կազմեցին ծխամորճեր են գտնվել Մեծամորի միջնադարյան շերտի պեղումների ժամանակ, որի մասին մեզ տեղեկացրել է հնավայրը ուսումնասիրող հնագետ Լեմա Խանզադյանը: Նա պատրաստվում է դրանք հրատարակել Մեծամորին նվիրված երրորդ գրքում:

Կազմեցին ծխամորճեր գտնվել են նաև Արուճի վանական համալիրի պեղումներից և Գովրի գյուղի միջնադարյան բնակավայրից³:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված ծխամորճերը պատրաստված են բարձր որակի «չուղոտ», լավ հունցված, ավազահատիկներից գրեթե զուրկ կարմրավուն կամ բաց շիկավուն կավից: Որպես կանոն դրանք շատ նուրբ են, ակնհասճո և լավ թրծված: Ծխամորճերը պատրաստված են երկփեղկ կաղապարների մեջ, որի հետքերը նշմարելի են իրանի վրա, շնչյած ծխամորճ պատրաստող վարպետները, որպես կանոն, լրացուցիչ մշակման ժամանակ փորձել են վերացնել փեղկերի միջև գոյացած երիզը:

Խնդրո առարկա ծխամորճերի մեծ մասը գեղազարդված է հենց կաղապարների մեջ արված զարդանախշերով, մյուս մասը՝ կաղապարելուց հետո, դեռևս խոնավ ժամանակ՝ կնքադրոշմերի օգնությամբ: Ծխամորճերը դաջազարդվել են այդ նպատակի համար նախատեսված, բազմաթիվ վարդյակներ, ծաղկաթերթեր, բուսական, երկրաշափական և այլ պատկերներ ունեցող փոքրիկ կնքադրոշմերով:

ԾԹև առանձին մանրամասներ զանց առնենք, ապա Հայաստանում գտնված ծխամորճերի ողջ քանակությունը կարելի է բաժանել չորս հիմնական խմբի.

Առաջին խումբ. փոքր գլխիկ, ուռուցիկ կոթուն և բարձր ու հաստ շուրթեր ունեցող ծխամորճերն են, որոնք բավականին սովոր քանակ են կազմում: Դրանց շուրթերի և գլխիկի միացման ներսի մասը ծխելիքի (թերևս թուփունի կամ այլ նյութերի) վառվելու հետևանքով առաջացած ածխանման սև նստվածք ունի: Ծխամորճերի գլանաձև մասերը պատրաստվել են առանձին և ապա միացվել կոթունին: Դա շատ պարզ երևում է բեկորներն ուսումնասիրելիս: Ծխամորճերը դրսից լավ մշակված են, փայլեցված և ներկված են կարմիր կամ դեղնավուն օքրայով, որը շատ հաճելի տեսք է տալիս նրանց:

Քննարկվող խմբի ծխամորճերը զարդարել են կավի՝ դեռևս խոնավ ժամանակ: Մուր գործիքի կամ կնքադրոշմի օգնությամբ արված են երկրաշափական կամ բուսական տարրեր զարդանախշեր: Նրանց մեծ մասը զարդարված է վերից վար անցնող ակոսիկներով (կանելուրեներով): Նրանց կոթունի և գլխիկի միացման տուղը նման է լեզվակի՝ շրջանակված մանր կետազարդերով: Նմանատիպ կետազարդ է նկատվում նաև ծխամորճերի շուրթերի վերին մասում:

Երկրորդ խումբ. համեմատաբար փոքր շափերի գլխիկներ և քիչ բարձրացող շուրթեր ունեցող ծխամորճերն են: Սրանց քանակը չի անցնում մի քանի տասնյակից: Բոլորն էլ լավ մշակված ու փայլեցված են: Այս խմբի ծխամորճերի մի մասի գլխիկը կոթունի հետ միացված է լեզվակի տեսքով, որի վրա հանդիպում են պատրաստող վարպետներին բնորոշ անհատական նշաններ, իսկ շուրթը՝ մանր վերադիր կետազարդ: Մյուսները միացման տեղում ճնշելու միջոցով ստացել են ուղղանկյուն պատկեր: Երկրորդ խմբի ծխամորճերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գրեթե բոլորն անխտիր լավ դրոշմազարդված են: Նրանց վրա պատկերված են 8, 10, 12 թերթանի վարդյակներ կամ պարուրաձև զարդանախշեր: Իսկ մի քանիսի վրա պատկերված են ինչ-որ լայնատերև ծաղկի թերթեր:

Բոլոր ծխամորճերի գլխիկների ներսի կողմում ածխանման նստվածք կա: Ինչպես առաջին խմբի ծխամորճերին, սրանց գլխիկները նույնպես պատրաստվել են առանձին կաղապարների մեջ և ապա միացվել կոթուններին: Հատկապես այս խումբը պատրաստված է գեղարվեստական նուրբ ճաշակով, մեծ քանադրությամբ և վարպետությամբ:

Որպես կանոն բոլորն էլ ներկված են կարմիր ներկով:

Երկրորդ խումբը կազմում է համեմատաբար փոքր քանակություն: Դրանց գլխիկները, հակառակ առաջին երկու խմբերի, ոչ թե կլոր կամ ձգված են դեպի վեր, այլ խիստ տափակ են և ունեն շատ փոքր տարողություն: Սրանք նույնպես զարդանախշված են, իսկ մի քանիսի վրա այնքան դաջվածք կա, որ գլխիկների վրա դաջվածից ազատ տեղ հնարավոր չէ գտնել: Ընդ

³ ՏՆՎՍՍ. Սաղումյան, Փակագրությունը հայ վիճագրության մեջ, «Լրաբեր», 1980, № 3, էջ 81: Ծխամորճի վրա կա հայատառ փակագիր:

⁴ Հայաստանի տարածքում կավե ծխամորճերի տարբեր տեղերում գտնվելու և նրանց քանակի մասին տեղեկացել ենք տարբեր աղբյուրներից կամ անհատ անձանցից (մասնավորապես մեր շնորհակալությունները Բագրատ Սաղոյանին և Սթաֆե Հմայակյանին): Մեր այս տվյալները ծխամորճերի մասին կարող են որոշ շափով հնացած լինել, այժմ դրանց գտնվելու տեղի աշխարհագրությունն ավելի ընդգրկուն է և քանակն էլ ավելի:

որում, գաջվածքները՝ լոտոսի բացված ծաղիկներ, վարդյակներ, երկրաչափական պատկերներ և այլն, իրարից բաժանվում են վերադիր կետաշարերով: Այս խմբի ծխամորճերը նույնպես պատրաստված են լավ մշակված բաց դեղնավուն կավից, խնամքով փայլեցված են, բայց առանց գունազարդուման:

Չորրորդ խմբի մեջ առանձնացրել ենք համեմատաբար պարզ, նախշերից զուրկ ծխամորճերը, որոնք ոչնչով աչքի չեն ընկնում: Ակնհայտ է, որ սրանք պատրաստվել են առանց լրացուցիչ շանքերի, իսկ օգտագործողները հավանաբար հասարակության ցածր խավի ներկայացուցիչներ են եղել:

Խնդրո առարկա ծխամորճերից շուրջ մեկ տասնյակի վրա կան պատրաստող վարպետների անհատական նշան-կնիքները, իսկ լոտոսի հնավայրից գտնված երեք օրինակի վրա նկատվում է միևնույն վարպետի կնիքը: Այն արված է ծխամորճի կոթունի և գլխիկի միացման տեղից թիչ վեր՝ կոթունի բարակացող մասում: Այս հանգամանքը մեզ որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ լոտո քաղաքը, հավանաբար, ունեցել է կավե ծխամորճերի սեփական արտադրության արհեստանոց:

Բացի Հայաստանի Հանրապետության տարածքի վերոհիշյալ հնավայրերից, կավե ծխամորճեր գտնվել են հարևան Վրաստանի Դմանխի, Քրիլխի և Ախալքալաք քաղաքների¹⁰, ինչպես նաև Ադրբեջանի Բաքու քաղաքի¹¹, Բայլականի, Գյուլիստանի¹² քնակավայրերի ու Հյուսիսային Կովկասից՝ Գաղտանի հնավայրերի պեղումներից¹³, Վերջիններիս ուսումնասիրող Ռաֆայել Աճմեդովի մանրամասն նկարագրությունից պարզվում է, որ Բաքվի, Գաղտանի և Վրաստանի հնավայրերի պեղումներից հայտնաբերված ծխամորճերը թե՛ իրենց ձևերի բազմազանությամբ, թե՛ պատրաստման հնարքներով և թե՛ պատկերազարդումով հար և նման են Հայաստանում գտնվածներին: Բաքվում գտնված երեք ծխամորճի վրա ուսումնասիրողը կարգացել է ծխամորճի տիրոջ, գուցե և այն պատրաստող վարպետների անունները՝ Փավրիզ, Ցուսուֆ, Ասադ: Իսկ այլ օրինակների վրա հանդիպում են ծխամորճը պատրաստող վարպետներին քնորոշ անհատական-պայմանական նշաններ՝ կնիքներ¹⁴:

Բնականաբար մեզ հետաքրքրեց, թե բացի նշված վայրերից, ուրիշ որտեղ են հանդիպում կավե ծխամորճեր: Պարզվեց, որ շուրջ 80 ծխամորճ է գտնվել Մոսկվա քաղաքի Ցաուզայի զետափին գտնվող կավագործական արվարձանի պեղումներից: Ծխամորճեր են գտնվել նաև Մոսկվայի Մետրոպոլիտենը կառուցապատելիս և Կրեմլի մոտակայքում: Դրանք հրատարակող Ռ. Թոդևեֆելդը՝ հիմք ընդունելով դրանց պատրաստման եղանակը, այդ բոլորը բաժանում է երկու մեծ խմբի՝

ա) ծխամորճեր՝ պատրաստված հարթ մակերես ունեցող կաղապարներում,

բ) ծխամորճեր՝ պատրաստված զարդարուն կաղապարներում:

Պարզվում է, որ առաջին խմբի ծխամորճերը իրենց շափերով խոշոր են: Դրանք շուրջ 9—10 սմ բարձրություն ունեն ու բազմաթանակ են: Ըստ հեղինակի, դրանք առավել վաղ ժամանակներով են թվագրվում, քան երկրորդ խումբը¹⁵:

Չնայած քննարկվող խմբի ծխամորճերը հասարակ են համարվում, բայց դրանք արտաքինից անպայման ենթարկվել են լրացուցիչ զարդարման՝ կնքադրոշմների օգնությամբ¹⁶:

Ուսումնասիրվող կավե ծխամորճերի խմբաբանակի մեջ հեղինակն առանձնացնում է հատկապես մեկը, որի գլխիկի շուրթին պղնձե օղակի հետքեր են պահպանվել: Կարևոր է ենթադրել, որ այդ պղնձե օղակը ժամանակին մաս է կազմել ծխամորճի փակվող-բացվող կափարիչի, որով

¹⁰ Տե՛ս Գ. Ա. Ломтатидзе, Тбилисская экспедиция, АО, 1967, Москва, 1968, էջ 307; Т. Д. Арчваладзе, Позднефеодалная неполивная керамика из Восточной Грузии, см. Археологические памятники феодальной Грузии. Т. 3, Тбилиси, 1978, էջ 132:

¹¹ Տե՛ս Բ. Д. Ахмедов, О курительных трубках средневекового Баку, Известия АН Азерб. ССР, 1979, № 2; Բ. Ахмедов, Керамика средневекового Баку IX—XVIII вв., кандид. диссерт., Баку табл. 28—30, 1984, էջ 125—131, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարան, նաև Նույնի Բазведка в зоне двухэтажного карвансарая XVI—XVIII вв. в «Игери Шахар», см. АО, 1976, Москва, 1977, էջ 487:

¹² Տե՛ս Գ. М. Ахмедов, Средневековый город Байлакан (Историко-археологическое исследование), Автореферат докт. диссерт., Баку, 1972, էջ 122:

¹³ Տե՛ս А. А. Кудрявцев, Раскопки богатого здания VIII—XIII вв. в жилом квартале средневекового Дербента: см. Археологические памятники ранне-средневекового Дагестана, Махачкала, 1977, էջ 99, табл., VII, рис. 6:

¹⁴ Տե՛ս Բ. Ахмедов, նշվ. աշխ., էջ 128—130:

¹⁵ Տե՛ս Բ. Розенфельдт, Московское керамическое производство XII—XVIII вв., Москва, 1968, см. Свод археологических источников, вып. Е., 1—39, с. 56—57 и 71—72.

¹⁶ Տե՛ս նույն տեղը:

առվորաբար ծխելիս կարգավորում էին օդի քանակությունը՝ կրակը թեժացնելու կամ, ընդհակառակը, թուլացնելու համար¹⁷։ Կախարչի բացակայությունը դեպքում օդի հոսքը կարգավորվում էր բուժ մատի օգնությամբ։

Մոսկովյան ծխամորճերը ուսումնասիրողի հավաստմամբ, դրանց մեծ մասն ունեցել է պատրաստող վարպետի կնիք՝ տարբեր ձևերի ու տեսքի։ Իսկ մի քանիսն էլ ունեցել են արաբատառ արձանագրությունների անընթեռնելի նմանակումներ։ Ռ. Ռոզենֆելդը պնդում է, որ այս ծխամորճերն արտադրվել են տեղում, քանի որ գտածոների մեջ կան ինչպես թերի մշակումներով, խոտանված, այնպես և բուրդովին լօգտագործված օրինակներ։ Հետևաբար, արաբատառ անընթեռնելի արձանագրությունների առկայությունը պետք է համարել տեղական արտադրության նմանակման փորձ՝ ելնելով շուկայում դրանց նկատմամբ եղած մեծ պահանջարկից։

Մոսկվայի տարածքում գտնված ծխամորճերի երկրորդ խումբը լրացուցիչ մշակման համարյա չի ենթարկվել, քանի որ վարպետները բավարարվել են կաղապարների հարուստ զարդանախշով։ Իսկ դրանք շատ բազմազան են։ Նույնիսկ գտնվել է հարդարված մագերով և գլխափոցով կանացի գլխի նմանվող ծխամորճ։ Հանդիպում են նաև բարձրակրունկ, ճտքավոր կոշիկի նմանվող ծխամորճեր¹⁸։

Հեղինակը մոսկովյան գտածոները թվագրում է ժՀ դարով՝ կապելով Պետրոս Մեծի եվրոպական նորամտությունների հետ։ Միաժամանակ նա գտանձնացնում է ծխամորճերի մի խումբ արքանակ, որն անվանում է «հույնական» և հիմնավորում նրանց բերովի լինելու հանգամանքը։ Ըստ Ռոզենֆելդի, Հույնդիայում ծխամորճերի արտադրությունը սկսվել է ժՋ դարի երկրորդ կեսին։ Հույնական համարվող ծխամորճերը, թե ձևերով և թե զարդարման եղանակով խիստ տարբերվում են տեղական՝ ռուսական արտադրանքից։ Դրանք պարզունակ են և անզարդ։

Նշենք հետաքրքիր մի փաստ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարը 1644 թ. հատուկ հրահանգով արգելում էր իր տերության տարածքում ծխախոտ անեցնելը, վաճառքը և ծխելը, հակառակ դեպքում զանցանքի մեջ բռնվողը ենթարկվում էր մարմնական պատժի¹⁹։ Այդ հրահանգը չէր տարածվում Մոսկվայում ապրող օտարերկրացիների, հատկապես մահմեդականների վրա։ Նրանց համար արվում էր բացառություն, թույլատրվում էր «խմել» ծխախոտ, ինչպես ժՀ դարում Ռուսաստանում ասում էին ծխելուն²⁰։

Հույնական կոշիկով կապե ծխամորճերի մի ստվար քանակություն հայտնի է դարձել Լեֆինգրադի (Ս. Պետերբուրգ) 1952 թվականի պեղումներից, և ուսումնասիրող հնագետը դրանք թվագրում է ժՀ դարով²¹։

Մոսկվա քաղաքի տարածքում գտնված տեղական արտադրության ծխամորճերի մեկ այլ

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 57։

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 57, աղ. 19, 42 և այլն։

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 72։

²⁰ Իմիջիայլոց, արժե նշել, որ նույն «խմել» բառով են արտահայտել ծխելը նաև հայ ուլ միջնադարյան հեղինակները։ Օրինակ ժՋ—ժԷ դարերում գրված «Պատմություն պիղծ թուփուներին» բանաստեղծության հեղինակ Հովհաննեսը գրում է.

Չըպուխ զալիոն է զարդարուն,
Դրբած բերնին՝ չափեն քան զշուն,
Խրմեն, հանեն զծուխն ի բերեկե,
Քրթեն, յաշացն, յականչներուն...
Սուտ քահանայք կան յաշխարհի,
Խրմեն, զբիին զայն պիղծ թուփուն...
Նստին, խրմեն հրապարակավ,
Հաշեն զոռնան քան զգեղի շուն...:

Տե՛ս «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», կազմեցին՝ Ա. Գ. Մադաթյան, Գ. Գ. Անանյան, Երևան, 1979, էջ 617—618։ Մեր կարծիքով ծխախոտ «խմել» հասկացությունը ծագել է մահմեդական աշխարհում ընդունված դայլունի (կայլունի) օգտագործման եղանակից, որը ծխում էին ջրի և երկար խողովակի օգնությամբ։ Այժմ նույնպես որոշ մահմեդական երկրներում (Թուրքիա, Իրան, Սիրիա, Ադրիատոս և այլն) այն կոչվում է «նարդիլ» խմելը։ Պոլսահայերը ժՀ—ժԹ դարերում և նույնիսկ վերջերս ծխախոտի զանազակ ծխելու փոխարեն օգտագործում էին «չղարա» մը խմելը՝ արտահայտությունը։

²¹ Տե՛ս А. Грач, . Археологические раскопки в Ленинграде, М.-Л., 1957, с. 13—14, табл. 5—6։

ուսումնասիրող²² առանձնացնում է շուրջ 15 ծխամորճ, որոնց վրա կան պատրաստող վարպետ-նշան-կնիքներ՝ արաբատառ անրեթեոնելի արձանագրությունների, զիզգագների, վարդյակների կամ այլ պայմանական նշանների տեսքով, իսկ մի դեպքում էլ առանձնացնում է ուսական «Ա» տառին նմանվող կնքադրոշմ²³:

1994—95 թթ. Ղրիմի տարածքում կատարված պեղումների ժամանակ գտնվել է կավե ծխամորճների հարուստ հավաքածու: Այդ մասին մեզ հայտնեց հնագետ Յրինա Բաբայանը, որը մասնակցել է պեղումներին²⁴: Դրանց մեջ կան նաև հայատառ արձանագրություններով ծխամորճեր:

Ծխամորճների հարուստ հավաքածու կա Բուլղարիայի Վանա քաղաքի պատմության թանգարանի պահպանում (370 հատ), Սոֆիայի հնագիտական թանգարանում (350 հատ)²⁵, ինչպես նաև Բուխարեստի թանգարանում՝ մի քանի տասնյակ հատ²⁶: Կավե ծխամորճների հարուստ հավաքածու կա նաև Մոլդովայի թանգարաններում²⁶:

Վանայի թանգարանի ծխամորճերն ուսումնասիրող Մագդալինա Ստանչևան ողջ նյութը նույնպես բաժանել է շորս հիմնական խմբի:

Առաին խմբի մեջ նա միավորում է զարդարուն կոթուն ունեցող և փոքրիկ զլիխներով շուրջ 40 ծխամորճ: Այս խմբաքանակը հիմնականում պատրաստվել է զարդարուն կաղապարներով, հեռագայում ենթարկվել լրացուցիչ մշակման: Հատկապես շատ են դրոշմակնիքների օգնությամբ զարդանախշավածները: Հիմնականում պատկերված են վեց-ութ թերթանի վարդյակներ, ծաղիկներ, բուսական և երկրաչափական զարդեր, ռոմբեր ու այլ պատկերներ, որոնք իրարից բաժանվում են փոքրիկ փոսիկազարդերի կամ ուռուցիկ կետազարդերի օգնությամբ:

Այս ծխամորճերը հեղինակը թվագրում է ժԼ դարի սկզբներով և համարում է տեղական կավագործական արհեստանոցի արտադրանք²⁷:

Նման եզրակացություն համար հեղինակը լուրջ փաստարկներ ունի, որովհետև գրավոր վկայություն կա Սոֆիայում դեռևս 1604 թվականին կավագործական էսնաֆուլյան (համաբուսության) հիմնադրման մասին²⁸: Պատահական չպետք է համարել, որ քննարկվող ծխամորճերի մեծ մասի վրա, որպես վարպետի նշան, նկատվում է միևնույն կնքադրոշմը:

Երկրորդ խմբի մեջ միավորվում են սպիտակախեցի ծխամորճերը: Դրանց զլիխը և կոթունը երկփեղկանի կաղապարի շնորհիվ մի ամբողջություն են կազմում, որոնց վրա նույնպես կնքադրոշմների օգնությամբ դաջված են պատրաստող վարպետներին բնորոշ կնիքներ՝ արաբատառ հապաված բառեր կամ պայմանական նշաններ: Ծխամորճերն առավել պարզունակ են, զարդարանքից համարյա զուրկ²⁹: Քննարկվող խմբի ծխամորճերի քանակը Սոֆիայի թանգարանում անցնում է հինգ տասնյակից³⁰: Քանի որ դրանց մեջ կան նաև խոտանված օրինակներ, որոնք բոլորովին գործածության մեջ չեն եղել, ուստի ուսումնասիրողներն իրավացիորեն դրանք համարում են տեղական արտադրության արդյունք: Հետաքրքիր է, որ նման ծխամորճերից երկուսը շնարակապատ են: Չնարակապատ ծխամորճ հանդիպում է նաև Մոսկվայի և Բաքվի հավաքածուներում, մի երևույթ, որ Հայաստանի և Վրաստանի հնավայրերի համար առայժմ չի նկատվում:

Երրորդ խմբի մեջ, հնագետ Ստանչևան առանձնացնում է կարմրախեցի, համարյա անզարդ ծխամորճերը, որոնք հիմնականում ունեն դանի տեսք: Զարդանախշը միայն նկատելի է.

²² Տե՛ս М. Рабинович, Гончарная слобода в Москве 16—18 вв., см. МИА СССР, 7, ст. 72—73, рис. 22:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Օգտվելով պատեճ առիթից՝ մեր շնորհակալությունն ենք հայտնում Ֆ. Բաբայանին: Հիշատակված ծխամորճերի հրատարակման աշխատանքները տարբեր պատճառներով ուշանում են:

²⁵ Տե՛ս М. Станчева, Ст. Медарова, Производства на глинени лули у нас. Музей и пометници на културата, Варна, 1968, кн. 4, ст. 4—13. Станчева Магдалина, Колекцията от лули във Варненская музей, Известия на Народния музей, Варна, кн. VIII (XIII), 1972, ст. 81—99.

²⁶ Տե՛ս Y. Yonascu-Vl. Zirra, Manastirea Radu voda si biserica Bucur, Bures-tiul de oținorra, 1959, p. 96, pl. LXVIII(68), 1—3.

²⁷ Տե՛ս Al. Andronic-Eug Neamtu, Cercetari archeologice peteplitul orasutut Sasi en anii, 1956—1960, Archeologia Moldovei, II-III, 1964, p. 425 s, p. 428, tig. 141.

²⁸ Տե՛ս М. Станчева, նշվ. աշխ., էջ 82, 87, նկ. 7, 8:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 82—83:

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 82—83:

³¹ Տե՛ս նույն տեղը, էջ 87—88:

կոթունների և գլխիկների միացման տեղերում կետազարդի կամ փոստիկազարդի տեսքով: Հանդիպում են նաև պատրաստող վարպետներին բնորոշ պայմանական նշաններ³¹:

Չարտոչ խմբի մեջ տիպավորված են այն ծխամորճերը, որոնք պատրաստված են երկփեղկ կաղապարների մեջ, զարդարված են բուսական և երկրաչափական պատկերներով, իսկ հաճախ նաև ենթարկվել են լրացուցիչ մշակման³²:

Խնդրո առարկա ծխամորճերն աչքի են ընկնում ձևերի բազմազանությամբ, իսկ մի քանի օրինակներ նույնիսկ ոսկեզօծված են³³: Դրանցից մեկը երկարածիտ կոշիկի տեսք ունի³⁴: Խըմբաբանակում կան նաև պղնձե (բրոնզե) և արծաթե ծխամորճեր³⁵, որոնց գլխիկի պատերը խիստ նուրբ են, բայց վրան կան արծաթազործության մեջ հաճախ կիրառվող սևադի կամ մետաղական գրչի օգնությամբ կատարված նկարազարդումներ:

Դրանք հաճախ ուղեկցվում են արաբատառ անընթեռնելի արձանագրություններով: Տեղին է նշել, որ Հայաստանի տարածքում բրոնզից պատրաստված ծխամորճ հայտնաբերվել է ընդամենը մեկ օրինակ՝ Քանահատ-Վլաձորի վանական համալիրի մեր պեղումներից³⁶, որը, ի դեպ, զուրկ է որևէ զարդանախշից:

Կավե և մետաղե ծխամորճերի հետ Վառնայի հավաքածուի մեջ հանդիպում են նաև քարից (մարմար, քերթաքար), իսկ մյուս դեպքում՝ փայտից պատրաստված առանձին օրինակներ: Դրանք իրենց թև ձևով և թե զարդարման տեսնիկայով կրկնում են կավե ծխամորճերին³⁷:

Քեև Հայաստանում քարե կամ փայտե ծխամորճեր չեն գտնվել, բայց դրանց գոյության մասին ժամանակակիցների վկայություններում կան գրավոր տեղեկություններ: Օրինակ՝ ԺԶ—ԺԷ դարի բանաստեղծ Հովհաննեսն այսպես է նկարագրում ծխամորճը.

«Էր դալիտնն է սև մարմար

Կոթն ապանոս է և նախշուն»³⁸,

Այսպիսով, բավարարվելով միայն Բալկանյան առանձին երկրների, ինչպես նաև Մուղո-վալի, Ռուսաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի և Հայաստանի թանգարաններում արդեն կուտակված կավե ծխամորճերի հպանցիկ ծանոթությամբ, պարզ է դառնում, որ դրանք շատ տարածված են եղել թե իրենց կիրառական նշանակությամբ և թե ձևերի բազմազանությամբ ու զարդարման տեսնիկայով:

Չնչին քացառությամբ³⁹, համարյա բոլոր երկրների ծխամորճ ուսումնասիրող գիտնականները պնդում են, որ կավե ծխամորճերը հանդես են եկել միայն ԺԶ դարից հետո և իրենց ծաղկման գագաթնակետին են հասել ԺԷ—ԺԸ դարերում՝ կապելով այն Ամերիկա մայրցամաքից ծխախոտի Եվրոպա ներմուծելու հետ: Մեր դիտարկումները, հնագիտական հուշարձանների պեղումների շերտագրությունը, ուղեկցող լավ թվագրվող խեցեղենը և վերջապես նրանց ձևերի կատարելությունը թվագրման հարցում տարակարծության տեղիք են տալիս:

Հայ հնագետներից ոմանք, որոնց թվում Գր. Կարախանյանը, Ստ. Սասյանը և ուրիշներ, կարծիք են հայտնել, որ Հայաստանում գտնված ծխամորճերը կարող են լինել վաղ միջնադարյան կամ ընդհանրապես միջնադարյան ժամանակաշրջանի արտադրանք⁴⁰: Նման կարծիք էր հայտնում նաև հանգուցյալ պրոֆ. Կարո Ղաֆազարյանը մեր մասնավոր գրույցների ժամանակ:

Դրան հակառակ մի շարք հնագետներ կասկած են հայտնում, որ խնդրո առարկա կավե ծխամորճերը հավանաբար ուղ միջնադարյան ծագում ունեն՝ կապելով միայն ծխախոտի Եվրոպա ներմուծման հետ (Ա. Փալանթարյան, Լ. Պետրոսյան, Յր. Բաբայան):

Մենք, նկատի ունենալով մեր կատարած հնագիտական պեղումները Լոռի և Բջնի ամրոցներում, Քանահատ-Վլաձորի վանական համալիրում, այդ հուշարձանների շերտագրությունը, ծխամորճերի գտնվելու տեղավայրերը, այն ուղեկցող, հնագիտական առումով լավ թվագրվող խեցեղենը, ծխամորճերի ձևերի կատարյալ լինելը, զարդարման բազմազանությունը, հակված ենք այն տեսակետին, որ Արևելքում ծխամորճերը հանդես են եկել միջին դարերում և սկզբնական շրջանում կապ չունեին միայն ծխախոտ ծխելու հետ: Այլ հարց է, որ հետագա դարաշրջանում

³¹ Տե՛ս նույն տեղը:

³² Տե՛ս նույն տեղը:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 89, նկ. 13:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 94—96, նկ. 25:

³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 83—94, նկ. 5—6, 16—17 և 21—22:

³⁶ Տե՛ս Ի. Ղարիբջան, Վլաձոր, Երևան, 1983, էջ 73, նկ. 32:

³⁷ Տե՛ս Մ. Станчева, նշվ. աշխ., էջ 87—98, նկ. 26:

³⁸ Տե՛ս «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծություններ», էջ 617:

³⁹ Բացառություն է կազմում Ս. Իսմիզադեն՝ կավե ծխամորճերը թվագրվող ԺԲ—ԺԳ դարերով, տե՛ս Ս. Исмизаде, Крепостное сооружение в Бакинской бухте, СА, № 1, 1966, с. 281—282, рис. I, 3:

⁴⁰ Տե՛ս Երևան քաղաքի պատմության թանգարանի կառույց, էջ 34:

(ԺԶ—ԺԸ դդ.), երբ ծխախոտն իր տեղը նվաճեց եվրոպական ժողովուրդների կենցաղում, արեւմեյան երկրներում այն նույնպես դարձավ սովորական երևութ: Չնայած դա չէր կարող բացառել, որ ծխամորճերն օգտագործվին նաև իրենց նախկին նշանակութամբ⁴¹:

Նման տեսակետ պաշտպանելու համար ունենք հետևյալ կողմաները: Նախ՝ Լոռի ամրոցի պեղումների ժամանակ կազմեց ծխամորճերի հիմնական խմբաքանակը գտնվել է ԺԲ—ԺԴ դարերով թվագրվող միջնադարյան բաղնիքի և նրան հարող տարածքի շատրվանող ջրավազանների պեղումներից: Հնագիտական այդ շերտը հիմնավոր թվագրված է վրացական ԺԲ—ԺԴ դարերի թագավորների կողմից հատված պղնձե դրամներով, չնարակված և հախճապակե կավանոթներով, ապակե ջրամաններով ու փոքրիկ սրվակներով, ալքիմիկոսի կողմից օգտագործված ալամբիկներով և վերջապես ճարտարապետական հուշարձաններով (բաղնիք, շատրվանող երկու ջրավազան, պալատական շինություն, րնակելի շենք՝ որմնանկարներով հանդերձ և այլն)⁴²:

Կազմե ծխամորճերի քանակը հատկապես շատ էր շատրվանող ջրավազանների շրջապատի պեղումներից հայտնի նյութերի մեջ: Շատրվաններով ջրավազանները նախատեսված էին ամուսն շոգ օրերին փոխարինելու միջնադարում այնքան հայտնի բաղնիքներին՝ որպես հանգստի վայր, զրուցարան, հանդիպումների, առևտրական գործարքների, նարդի և շախմատ (ճատրակ) խաղալու կամ ընդհանրապես ժամանակ անցկացնելու վայր: Ձմռանը՝ ցուրտ և անձրևոտ օրերին, այդ դերը ստանձնում էին բաղնիքները, ինչպես ճիշտ նկատել ու համապատասխան աղբյուրագիտական նյութերով հիմնավորել է բաղնավաստակ հնագետ Հովսեփ Օրբելին⁴³:

Լոռի բերդ-քաղաքը ԺԶ—ԺԸ դարերում կորցրել էր իր վաղեմի փառքը և ռազմական նշանակությունը, համարյա զրկվել բնակչությունից և վեր էր ածվել միմիայն ռազմական հենակետի՝ շնչին քանակի պահակախմբով⁴⁴:

Դվին քաղաքում, փաստորեն, կյանքը դադարել է 1250-ական թվականներին և այլևս չի վերականգնվել: Ուստի այնտեղ ծխամորճերի քանակի սահմանափակ լինելը միանգամայն տրամաբանական է: Եթե ամրոցը որպես խոշոր բնակավայր դադարեց գոյություն ունենալուց 1604 թվականին, երբ Մեհ Աբասի հայտնի բռնագաղթի հետևանքով նրա բնակչությունը քշվեց Պարսկաստան: Հետևաբար, այդ հնավայրում գտնված հնագիտական նյութի, այդ թվում նաև կազմե ծխամորճերի թվագրումը ԺԾ դարի վերջից այս կողմ չի կարող անցնել: Եղած հնագիտական շերտը, որտեղ հանդիպում էին խնդրո առարկա ծխամորճերը, զուգահեռ նյութերով և մոնղոլական տիրապետության շրջանին պատկանող դրամներով թվագրվում է ԺԳ—ԺԾ դարերով: Արժե հիշել նաև այն հանգամանքը, որ Իվանե Զաքարյանի տրոմաճյուղը, որ իր համար նստավայր էր ընտրել Դվինը, 1250-ական թվականներին ստիպված էր հրաժարվել նրանից ու նրատավայր դարձնել Բջինն՝ մինչև ԺԾ դարը ներառյալ:

Գառնի ամրոցը բնակչությունից նույնպես զրկվեց Մահ Աբասի վերահիշյալ բռնագաղթի հետևանքով, բայց չէ՝ որ այստեղ նույնպես գտնվել են կազմե ծխամորճեր: Հատկեի վանական համալիրի պեղման-մաքրման աշխատանքների ժամանակ գտնված կազմե ծխամորճի հետ նույն շերտում գտնվել է սելջուկյան դարաշրջանին պատկանող դրամ, որի մասին արդեն հիշատակել ենք նախորդ էջերում:

Մեծամորի բրոնզեդարյան հնավայրն ուսումնասիրող հնագետ էմմա Խանգադյանը մեզ հայտնեց, որ այդ հուշարձանն ունի նաև քավական շոշափելի միջնադարյան շերտ, որը լավ թվագրվում է մինչև ԺԾ դարը: Այս շերտի պեղումներից նույնպես գտնվել է կազմե ծխամորճերի մի քանի օրինակ, որոնք ուղեկցող նյութերով թվագրվում են ԺԴ—ԺԵ դարերով: Հեղինակը դրանք պատրաստել է հրատարակման Մեծամորի պեղումներին նվիրված առաջիկա հատորում: Հնագետ Միմոն Հմայակյանը Գովրիի հնավայրի պեղումների ժամանակ նույնպես հանդիպել է կազմե ծխամորճերի, որոնք, նրա պնդմամբ, նույնպես պատկանում են մինչև ԺԾ դարի շերտին: Առավել քան հիմնավոր է այդ կարծիքը, քանի որ Գովրիի հնավայրը դրանից ուշ դարաշրջանի հնագիտական շերտ չունի:

Արժե հիշել նաև, որ Բաքվի ծովածոցի միջնադարյան ամրոցն ուսումնասիրող հնագետ Ո. Իսմիլզադեն իր պեղած մշակութային շերտը նույնպես թվագրում է ԺԲ—ԺԳ դարերով, ուր հանդիպում են կազմե ծխամորճեր: Շերտի թվագրման համար հնագետին հիմք են ծառայել չնարակված և հախճապակե լավ թվագրվող կավանոթները. 1234—35 թթ. արձանագիր տապալանաքար, ինչպես նաև Շիրվանշահ Ֆարխուդի որդի Գերշասի պղնձե դրամները⁴⁵:

⁴¹ Արժե հիշել, որ մինչև հիմա էլ Հեղկաշինի երկրներում հաշիշամոլները օգտագործում են ու թե ծխախոտի գլանակներ, այլ ծխամորճեր:

⁴² Տե՛ս Ի. Ղադիրյան, Լոռի ամրոցի պեղումները, ԲԾԷ, № 3, 1970, էջ 250:

⁴³ Տե՛ս Ո. Օրբելի, Баян и скоморох XII века, см. Избранные труды, Ереван, 1964, էջ 316:

⁴⁴ Տե՛ս Ի. Ղադիրյան, Լոռի քաղաքը մատենագրության մեջ, ԲԾԷ, 1968, № 1, էջ 213—214:

⁴⁵ Տե՛ս Ս. Исминзаде, նշվ. աշխ., էջ 281—282: Նույն դարերով է թվագրում իր գտածոն

Մյուս հնավայրերի առավել ստույգ թվագրման մասին, ուր գտնվել են կավե ծխամորճեր, առայժմ դժվարանում ենք դատողություններ անել նյութի սակավության, դրանց գտնվելու տեղի և ուղեկցող նյութերի մասին ունեցած տեղեկությունների պակասի պատճառով:

Այնուամենայնիվ, միանգամայն իրավացի հարց է ծագում, եթե ծխամորճերը միջնադարյան են, ապա մինչ ծխախոտի նվիրույթ անհրաժեշտ էր և՛ էին ծխում արևելյան երկրներում:

Այդ հարցին պատասխանելու համար դիմենք միջնադարյան Արևելքի քննաչույթյան նիստու կացի, զբաղմունքի և արվեստի լավագույն գիտակ, բազմավաստակ Հովսեփ Օրբելու՝ Ամբերդ ամրոցի ԺԲ դարի բաղնիքի ուսումնասիրության առիթով արտահայտած կարծիքին, Մեծանուն արևելագետը, նկատի ունենալով արարա-պարսկական «Հագար ու մի գիշերներ» հեքիաթների և զրույցների ժողովածուի վկայությունները, ինչպես նաև այլ կողմնակի տեղեկություններ, հանգում է հետևյալին. «... մենք գիտենք Արևելքի բաղնիքներում, ովքեր նյութական հնարավորություն ունեին, ինչպես էին սիրում լողանալ իրենց մարմինը օձի սալ բազմապիսի անուշահոտ յուղերով, կամ մերսում էին տարբեր օձանելիքներով, միաժամանակ շքեղում էին ծխամաններում, խնկարկման անոթներում այրվող տարաբնույթ խեժերի հոտը»⁴⁶:

Որպես դրա պատգույց՝ նկարագրում է Ամբերդի բաղնիքի հարկարածիներինց մեկում գտնված բրոնզե փոքրիկ հավանքների առկայությունը: Դրանց մեջ, ըստ Օրբելու, ծեծելու մանրացրել են համապատասխան խեժեր և այրվելիք այլ նյութեր: Իսկ մի՞թե չի կարելի հավանական համարել, որ այդ նպատակի համար կարող էին օգտագործել նաև կավե ծխամորճերը: Ենթադրվում է նարգիլները՝ որպես հաճույք ստանալու անհատական միջոցներ: Չէ՞ որ Արևելքի երկրներում՝ Իրան, Հնդկաստան, Չինաստան, Սիամ, Միջին Ասիա և այլն, քնակվող ժողովուրդները, հնուց ի վեր սովորույթ են ունեցել հոտավետ խեժերի հետ միասին օգտագործել նաև կակալի սերմեր, կանեփ, քաբաթու⁴⁷ և այլն՝ հաշիշի (ափտոն) տեսքով, ծխելու կամ ծամելու համար: Իսկ հաշիշի օգտագործման խոր հնությունը մասին որոշակի տեղեկություն է հայտնում Արևելքի անգղագետական պոետ Ֆիրդուսին՝ «Շահնամե» պոեմում⁴⁸, Վերջապես, ԺԾ—ԺՁ դարերի արարա-լեզու ձեռագրերի մանրակարներում հանդիպում են նարգիլի, դալլոն ծխող մարդկանց պատկերներ⁴⁹:

Այս բոլորը մի՞թե մեզ հիմք չեն տալիս ենթադրելու, որ հայերը, իրենց հարևան ժողովուրդների հետ միասին, ապրելով հատկապես մուսուլմանական երկրներով շրջապատված տարածաշրջանում, փոխ են առել հարևան ժողովուրդների սովորությունները և ունեցել են անուշահոտ խեժերի ու տարաբնույթ թմրանյութերի օգտագործման սովորույթ և դրա համար օգտրվել են ինչպես խնկարկման անոթներից, այնպես էլ կավե ծխամորճերից:

Մեր կարծիքով, միանգամայն բացատրելի է նաև այն իրողությունը, որ Հայաստանի այնպիսի նշանավոր քաղաքներ, ինչպիսիք Անին և Գլինն են, այդքան ազդատ են կավե ծխամորճերի առկայությունից, իսկ որոշ տեղերում ընդհանրապես դրանք բացակայում են: Պատճառը հետևյալն է. ծխելու սովորույթը Իրան, Անգղիայի և Առաջավոր Ասիա ներածվից մտնող նվաճողների կողմից ԺԳ դարի կեսերին: Հետևաբար, այն քաղաքները, որոնք ավելի վեցին վերջիններիս նվաճումների ժամանակ, քնակությունը չէր կարող ունենալ ծխելու սովորույթ, հետևաբար՝ կավե ծխամորճեր: Իսկ գոյատևած քաղաքների ու ամրոցների քնակությունը վերնախավը, որը սովորաբար առավել շուտ է ընդունում օտար բարքերը, քան հասարակ ժողովուրդը,

նաև Ա. Կուրյավցևը, որը պեղումներ է կատարել Դադաստանում (տե՛ս Ա. Կուրյավցև, Նշվառ., էջ 99):

⁴⁶ Չ. Օրբելի, Նշվ. աշխ., էջ 319:

⁴⁷ Ավելորդ չէ հիշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ ծխախոտի խիստ պակասություն էր զգացվում, Հրազդանի շրջանի գյուղերում ընդունված էր ծխել ժայռերի, առանձին քարերի ու անտառի որոշ ծառատեսակների վրա հանդիպող քարաքոսը և վայրի կակալի (խաժխաժ) սերմերի խառնուրդը: Այդ մասին իմ ութսունամյա պապիկը հաճախ էր կրկնում. «Ճիշտ է, սա թուփուն (ծխախոտ) չէ, բայց հազեցնում է ծխելու և ուտելու պահանջը և միաժամանակ թմրեցնում մարդկանց: Քարաքոս ծխելու սովորույթը մեզ է անցել մեր պապերից, որոնք ապրել են Հին Քայազետի գավառի Արծափ բերդավանդում: Մի՞թե սա պատահական հիշողություն է լինելում ծվարած, քաղաքակրթությունից հեռու հայ գյուղացու համար: Մեր կարծիքով, այդ սովորույթը պետք է ավանդված լինի դարերի խորքից՝ մինչև ծխախոտի նրանց կենցաղ մտնելը:

⁴⁸ Տե՛ս Ֆիրդուսի, Շահնամե, Երևան, 1975, էջ 413:

⁴⁹ Հավաստի տեղեկություն կա, որ Իրանում միայն 1634 թվին է սկսվել առաջին անգամ ծխախոտի օգտագործումը: Դրանից առաջ այն հայտնի չի եղել Իրանում և նրան հարող երկրներում: Իմիջիայոց, ծխախոտի առևտուրը Իրանում կազմակերպել են անգլիացիները, տե՛ս E. Rogozin, История табака и системы налога на него в Европе и Америке, СПб, 1871, էջ 10—19, 23:

ենթարկվեց նվաճողների սովորութուններին, և բնական է ծխամորճերի մնացորդների այդքան քանակութունը տվյալ հնավայրերում:

Ի դեպ, պետք է նշել նաև, որ պատահական չէ Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Բալկանյան երկրների, Անդրկովկասի հանրապետութիւնների հնավայրերից հայտնի ծխամորճերը հաճախ իրենց վրա կրում են արաբատա անընթեռնելի արձանագրութիւններ, որոնք տեղական վարպետների կողմից դիտվել են որպես զարդարանք և ոչ թե անուն կամ պատկանելութուն ցույց տվող տեղեկութուն:

Նկատենք նաև, որ «հուանդական» կոչվող ծխամորճերը պարզունակ են, անզարդ և ունշով աչքի չեն ընկնում: Իսկ չէ՞ որ հոյանդացիների և անգլիացիների միջնորդությամբ ծխախոտը ներթափանցեց արևելյան երկրները: Եթե Արևելքի երկրներում գտնված ծխամորճերը կապված լինեին միայն ծխախոտի հետ, ապա պետք է կրկնեին եվրոպական երկրներից մեզ հայտնի ծխամորճերի ձևերը և զարդարման տիպերիկան: Հակառակ դեպքում ստացվում է, որ ընդօրինակողները հենց սկզբից գերազանցեցին իրենց ուսուցիչներին: Ճիշտ հակառակը, Եվրոպան է կամաց-կամաց հետևում Արևելքի, մասնավորապես մուսուլմանական աշխարհում արտադրված ծխամորճերի ձևերին ու զարդարման եղանակներին: Մի՞թե հնարավոր է պատկերացնել, որ ժէ—ժԸ դարերում Եվրոպայից Արևելք ներմուծվող ծխախոտի համար հանպատրաստից սկսեցին պատրաստել այդքան բարձրարժեատ վարպետության ծխամորճեր:

Իսկ նարգիլի՞ չրի և երկար խողովակի օգնությամբ ծխախոտ ծխելու սովորույթը տարածված է միայն մահմեդական աշխարհում, այդ թվում նաև՝ հայերի մեջ, որոնք խառը բնակվում են Թուրքիայի, Իրանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Եգիպտոսի երկրներում:

Այսպիսով, առայժմ հիմք ընդունելով հիմնականում Հայաստանի և հարևան երկրների մի շարք բնակավայրերի պեղումների արդյունքները, դրանց հնագիտական շերտագրութիւնը, ուղղակի և անուղղակի այլաբնույթ տվյալներ, հնարավոր ենք համարում պաշտպանել այն տեսակետը, որ կավե ծխամորճերը Արևելքում հանդես են եկել դեռևս միջին դարերում (համեմայնդեպս ժԳ—ժԻ դարերում անկասկած) և հարատեւել են մինչև ուշ միջնադար՝ անկախ ծխախոտի ներթափանցումից արևելյան երկրներ:

И. Г. ГАРИБЯН—К вопросу о датировке обнаруженных в Армении глиняных курительных трубок.— Из археологических раскопок и случайных находок в средневековых поселениях на территории Армении обнаружено около 150 курительных трубок. Трубки найдены также в соседних Грузии, Азербайджане, Северном Кавказе, в Средней Азии, России, на Балканах и т. д.

В вопросе их датировки возникли разногласия. Большая часть исследователей относит их происхождение к позднему средневековью (XVI—XVIII вв.), связывая это с ввозом табака в Европу. В результате всестороннего анализа, приняв за основу итоги археологических раскопок, ареал их распространения, хорошо датированные сопровождающие предметы материальной культуры, монеты, совершенство форм трубок, многообразие узоров их украшений, автор статьи приходит к выводу, что на Востоке глиняные трубки появились в средние века (XIII—XIV вв.) и в начальный период не имели связи с табаком. Для самого курения вероятно употреблялись листья лишайника, конопли, семена мака и другие растительные травы и смолы.